ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցությանը մասնակցելու նպատակով Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**
   Սմբատ Սահյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2019 թվականի հունվարի 24-25-ը

4. **Հրավիրող կողմը՝**

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցությանը

6. **Քննարկված թեմաները**

1) «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի նախագիծը (այսուհետ՝ Համաձայնագրի նախագիծ),

2) «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի կիրառման կարգի նախագիծ (այսուհետ՝ Կարգի նախագիծ)

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Հունվարի 24-ին և 25-ին կայացած խորհրդակցություններում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասնագետների, ԵՏՄ անդամ պետությունների

կենսաթոշակային ապահովության բնագավառում լիազոր, իրավասու մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկվել են Համաձայնագրի և Կարգի նախագծերը: Խորհրդակցությունները վարում էր Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքային միգրացիայի և սոցիալական պաշտպանության վարչության պետ Պ. Ու. Սույումբաևան:

Խորհրդակցության ընթացքում ամփոփվեցին Համաձայնագրի նախագծի վերաբերյալ առկա տարաձայնությունների շուրջ ծավալված քննարկումների արդյունքները:

Մասնավորապես, նշվեց, որ հաշվի առնելով Հայաստանի կուտակային կենսաթոշակային համակարգի առանձնահատկությունները՝ համաձայնագրով սահմանվել է բացառություն. Համաձայնագրի նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ կետում ամրագրվել է, որ Հայաստանում նշանակված կուտակային կենսաթոշակը վճարվում է ազգային օրենսդրության համաձայն:

Նշվեց, որ դեռևս փոխհամաձայնություն չկա ՌԴ-ում կենսաթոշակ նշանակելիս այլ պետությունում աշխատած մեկ տարվա համար շնորհվող անհատական կենսաթոշակային գործակցի արժեքի շուրջ:

Մեր կողմից մեկ անգամ ևս ներկայացվեց մեր սկզբունքային դիրքորոշումը՝ 1 տարվա համար հաշվարկել 1,8 գործակից, ինչպես ՌԴ-ում աշխատանքային ստաժում հաշվառվող՝ գործունեության հետ չկապված մեկ տարվա համար:

Քննարկվեցին նաև ԵՏՀ իրավաբանական ստորաբաժանման կողմից ներկայացված առաջարկությունները Համաձայնագրի նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ ենթակետերի վերաբերյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված առաջարկությունները հանգեցնում էին բովանդակային փոփոխությունների, դրանք մեկ անգամ ևս քննարկվեցին իրավաբանների հետ: Քննարկման ընթացքում ներկայացվեցին խնդրո առարկա դրույթների կարգավորման առարկան:

Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ իրավաբանները կփորձեն կրկին առաջարկել նոր խմբագրություններ:

Այնուհետ սկսվեց քննարկվել համաձայնագրի կիրառման կարգի նախագիծը (այսուհետ՝ Կարգի նախագիծ):

Քննարկմանը միացավ նաև ԵՏՀ ֆինանսական բլոկի մասնագետները:

Մասնավորապես, նրանք առաջարկեցին Համաձայնգրի համաձայն այլ պետությունում բնակվող անձանց կենսաթոշակների վճարման համար կիրառել այն ընթացակարգերը, որոնք կիրառվում են մաքսային վճարների բաշխման համար:

Ըստ այդմ, Համաձայնագրի անդամ պետություններից յուրաքանչյուրի անունով անդամ պետությունների կենտրոնական բանկերում բացվում են համապատասխան հաշիվներ:

Անդամ պետությունը, մյուս պետության տարածքում բնակվող անձանց կենսաթոշակները վճարելու համար պետական կամ այլ բյուջեից հատկացված միջոցները փոխանակում են համապատասխան արժույթի և գումարները մուտքագրում է տվյալ պետության անվամբ բացված հաշվին:

Քննարկման մասնակիցների կողմից նշվեց, որ խնդիրը պետք է քննարկվի Կենտրոնական բանկերի և գանձապետական համակարգերի հետ՝ վերջնական որոշումներ կայացնելուց առաջ:

Քննարկվեցին նաև կարգի նախագծի այլ դրույթներ:

8. Քննարկման արդյունքում որոշվեց՝

1) Համաձայնագրի նախագծի կապակցությամբ առկա տարաձայնությունը (1 տարվա համար հաշվարկվող գործակցի արժեքը) ներկայացնել ԵՏՀ-ին՝ խնդիրը ՀՀ Վարչապետի կամ ՀՀ Փոխվարչապետի հետ քննարկելու նպատակով,

2) խորհրդակցության արդյունքներով լրամշակված Համաձայնագրի նախագիծը ներկայացնել Հանձնաժողովի Կոլեգիայի, իսկ այնուհետև՝ Հանձնաժողովի Խորհրդի քննարկմանը՝ Համաձայնագրի նախագիծը ստորագրման համար ներպետական գործընթացների ուղարկելու նպատակով,

3) Հանձնաժողովը լրամշակում է Կարգի նախագիծը և խորհրդակցության արձանագրությունն ու Կարգի լրամշակված նախագիծը ներկայացնում է կողմերին՝ առաջարկություններ ներկայացնելու համար,

4) կազմակերպել ևս մեկ խորհրդակցություն՝ կենտրոնական բանկերի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ ֆինանսավորման ընթացակարգերը հստակեցնելու նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Պաշտոնական առաջարկությունները Հանձնաժողով կներկայացվեն գրավոր՝ կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցության արձանագրության համաձայն՝ նրանում նշված ժամկետներում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

29.01.2019թ